# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 54

## ՍԵՅՐԱՆ ՇԵԿՈՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Սեյրան Շեկոյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղում գործող ԱՁ Սեյրան Շեկոյանի հայտը, նրան տալ ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 1-ին կիսամյակի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 20թ. 02 05
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 55

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետը, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշումը՝ որոշում եմ

1. 06-029-0072-0004 ծածկագրի 0,32843 հա հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Գյուլագարակ 3-րդ փողոց, թիվ 22/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 20թ. 02 05
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 56

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ՍԵՂՄՎԱԾ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 8-րդ կետերով, հիմք ընդունելով Ա/Ձ Սիրվեն Շահբազյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղում գործող Ա/Ձ Սիրվեն Շահբազյանի հայտը, նրան տալ սեղմված գազի վաճառքի թույլտվություն համայնքի տարածքում ժամը 24:00-ից հետո 01.01.2020թ.-31.12.2020թ. ժամանակահատվածի համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 02 06
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 57

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, հիմք ընդունելով Եղիշե Ներսիսյանի դիմումը, որոշում եմ.

1.Բավարարել «Գրիգ Հաուս» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Եղիշե Ներսիսյանի դիմումը՝ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տրամադրելու մասին, ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան «ԳՐԻԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ին տալ համայնքի տարածքում գովազդային վահանակների տեղադրման թույլտվություն 01.01.2020թ.- 01.04.2020թ. ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2020թ. 02 07
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 58

## ՄԱՆՎԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Մանվել Մարտիրոսյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղում գործող ԱՁ Մանվել Մարտիրոսյանի հայտը, նրան տալ ծխախոտի և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020թվականի 1-ին եռամսյակի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 20թ. 02 07
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 59

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետը, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ որոշում եմ

1. 06-029-0048-0016 կադաստրային ծածկագրի 0,17 հա բնակելի տանը և տնամերձին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ 2-րդ փողոց, թիվ 31:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 02 11
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 60

### 06-057-0011-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.02463 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Սինդոյանի 04.11.2019 թ.-ի դիմումը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 30102019-06-0009 վկայականը, տրված 30.10.2019-թ. ին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Լոռու մարզպետի 10.02.2020 թ.-ի թիվ 01/111.5/01137-2020 գրությամբ, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ՝

1.Փոփոխել 06-057-0011-0009 կադաստրային ծածկագրի բնակավայրերի նպատակային նշանակության այլ հող գործառնական նշանակության 0,02463 հա հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2020թ. 02 11
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գյուլագարակ համայնք, գ.Գյուլագարակ
հեռ. 025662167

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» փետրվարի 2020 թվականի թիվ 61 - Ա

### ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-րդ կետին համապատասխան՝

**որոշում եմ.**

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման համար Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ սահմանել՝

1) գ.Գարգառ, դպրոցի շենքը 13փ.3շ.
2) գ.Պուշկինո, դպրոցի շենք 1 փ. 4բշ.
3) գ.Ամրակից, դպրոցի շենք 1փ. 18շ.
4) գ.Հոբարձի, դպրոցի շենք 1փ. 5շ.
5) գ.Գյուլագարակ դպրոցի շենք 1փ. 5շ.
6) գ.Կուրթան մշակույթի կենտրոն 5փ. 20գշ.
7) գ.Վարդաբլուր մշակույթի շենք Կենտրոնական 64

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

2020թ. փետրվարի 12
գ. Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 62

## 06-057-0011-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.04168 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետի 06.02.2020թ.-ի թիվ 01/111.5/01146-2020 գրության, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Գևորգ Սինդոյանի 04.11.2019թ. դիմումը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 30102019-06-0032 վկայականը, տրված 30.10.2019թ., որոշում եմ՝

1.Փոփոխել 06-057-0011-0010 կադաստրային ծածկագրի բնակավայրերի նպատակային նշանակության այլ հող գործառնական նշանակության0,04168 հա հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 02 12
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 63

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ որոշում եմ.

2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Գարգառ բնակավայրում՝ Կենտրոնական փողոց 83 շենքի հարևանությամբ գտնվող ավտոկանգառի պատերը-ընդհանուր մակերեսը 12քմ, Կենտրոնական փողոց 79 հասցեում գտնվող մշակույթի տան դիմային պատի մի հատվածը, մակերեսը 20քմ,

2) Ամրակից բնակավայրում՝ 1-ին փողոց , տուն 1 հասցեում գտնվող կիսակառույց շենքի դիմային պատը, մակերեսը՝ 18քմ, մանկապարտեզի շենքի դիմային պատը՝ հասցեն 1-ին փողոց, շենք 11, մակերեսը 35քմ,

3) Պուշկինո բնակավայրում՝ 2-րդ փողոց , թիվ80Ա հասցեում գտնվող վագոն տնակի պատերը, մակերեսը՝ 18քմ, ընդհանուր մակերեսը 20քմ,

4) Վարդաբլուր բնակավայրում՝ Կենտրոնական 54 հասցեում գտնվող նախկին ֆաբրիկայի շենքի դիմային պատը, մակերեսը 5քմ, Կենտրոնական 62 հասցեում գտնվող նախկին Պետ. տնտ. գրասենյակի շենքի դիմային պատը, մակերեսը 10քմ,

5) Կուրթան բնակավայրում՝ 5-րդ փողոց թիվ14 հասցեում գտնվող հին հեռախոսակայանի շենքի դիմային և կողային  պատերի որոշ մասեր՝ ընդանուր մակերեսը 6քմ, 5-րդ փողոց թիվ12Ա հասցեում գտնվող հին դպրոցի հարակից սպասասրահի պատերը, ընդհանուր մակերեսը 8քմ,

6) Հոբարձի բնակավայրում՝ բուժկետի շենքի դիմային պատը՝ հասցեն 1-ին փողոց թիվ10/1, ընդհանուր մակերեսը 20քմ,

7) Գյուլագարակ բնակավայրում՝ 1-ին փողոց թիվ 6 հասցեում գտնվող վագոն-տնակի պատերը-ընդհանուր մակերեսը 18քմ,1-ին փողոց շենք 3 հասցեում գտնվող չգործող խանութի շենքի պատերը, ընդհանուր մակերեսը 20քմ, 2-րդ փողոց թիվ1 հասցեի շենքի հարակից պատերը, ընդհանուր մակերեսը 6քմ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 02 13
գ.Գյուլագարակ